

ԲՁՆԻՒ ՎԱՆՔԸ ԵՎ ԲՁՆԻ ԳՅՈՒՂԻ ՄՅՈՒՄ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Բջնի գյուղը Հայաստանի հնագույն և նշանավոր բնակավայրերից է, այն տարածվում է Հրազդանի ձորում՝ գետի աջ ափին, այժմյան Հրազդանի (Ախտայի) շրջանում՝ պատմական Հայաստանի Այրարատյան նահանգի Վարածնունիք գավառում, հանդիսանալով Վարածնունյաց իշխանների նստավալը և պաշտոնական ամուր հենակետերից մեկը:

Պատմական աղբյուրներում Բջնի գյուղը հիշատակվում է Յ դարից: Հնագիտական հետազոտություններն էլ ցուց են տալիս, որ այնտեղ բնակություն է եղել Յ դարից դեռ շատ դարեր առաջ:

Դազար Փարպեցի պատմիչը, խոսելով Յ դարի հայ-պարսկական պատերազմների մասին, տեղեկացնում է, որ երբ հայկական բանկը, հայոց սպարապետ Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ դանվում էր Շիրակում, սպասելով դաշնակիցների զորքերի դալուն, Վահանը խորհուրդ էր տալիս հույս չդնել օտար՝ հունաց, հումեացոց օգնության վրա, այլ սեփական ուժերով՝ դեմ կանգնել թշնամուն: Ղեկավար զորականները և ավագանի հշխանները հավանություն են տալիս Վահանի այդ խորհրդին և ուխտում են մինչև արյան վերջին կաթիլը իրենց սեփական ուժերով դիմադրել պարսիկներին, միաժամանակ նպատակահարմար համարելով իրենց այդ ուխտը հաստատել երդմամբ: Ապա զորքաբանակում եղած Աթիլ անունով մի քահանա առաջ է մատուցում Ավետարանը՝ երդվելու համար: Փարպեցին ասում է, որ այդ

քահանան Բջնի երևելի գյուղից էր, «Եւ մատուցեալ յառաջ սրբոյ քահանային, որում անունն էր Աթիկ, որ էր ընդ նոսա ի բանակին, այր բանիքուն բանիւ և խորհրդապահ սրտիւ, յերևելի գեղջէն, որ կոչի Բջնի...»¹:

Հազորդ տեղեկությունը Բջնիի մասին վերաբերում է Յ դարին: Հովհաննես կաթողիկոս Դրասիսանակերտցին, խոսելով Հայոց եզր կաթողիկոսի և Հովհան վարդապետ Մայրավանցու փոխարքերությունների մասին, Մայրավանքի տեղը մատնացուց է անում «Ի ծործորս լերինն ամրոցին Բջնոյք»²:

Ժ դարի կեսերին Պահավունիները ժառանգելով Վարածնունիքը, Բջնին դարձնում են իրենց ոստանը և պաշտպանական ամուր հենակետերից մեկը, որի ընթացքում ավելի զարգանում, ընդարձակվում և բարգավաճում է այն: Մխիթար Այրիվանեցու վկայությամբ, Բջնին վերաշինում է Վասակ Պահավունին՝ Գրիգոր Մագիստրոսի հայրը. «Իսկ Մոնումախն, որ կալաւ գֆազիկ թագաւորն՝ ետ զիշխանութիւն երկրիս Գրիգորոյ Մագիստրոսի... Սա է որդին Հոլում Վասակայ՝ շինողին Բջնոյք»³:

Պահավունիները հիմնում են նաև Բջնիի վանքը, դարձնելով այն իրենց հոգեոր կենտ-

¹ Դազարայ Փարպեցոյ «Պատմութին Հայոց» և «Թուզը առ Վահան Մամիկոնեան», Թիֆլիս, 1908 թ., էջ 264:

² Յովհաննու կարողիկոսի Դրասիսանակերտցոյ «Պատմութին Հայոց», Թիֆլիս, 1912 թ., էջ 79:

³ Միքրարայ Այրիվանեցոյ «Պատմութին Հայոց», Մոսկվա, 1860 թ., էջ 58—59:

րոնը. իսկ Պետրոս Գետաղարձ կաթողիկոսը, Սմբատ-Հովհաննես շահնշահի հրամանով, Բջնիի վանքը հաստատում է որպես եպիսկոպոսանիստ վայր՝ իր հատուկ թեմով-վիճակով, ինչպես այդ մասին վկայում է վանքի հարավային պատի վրա փորագրված հետևյալ առձանագրությունը. «թ. ՆԶ. (1031), Շնորհին Աստուծոյ այս հրամանը է իմ Տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի և Սմբատայ շահնշահի, որ հաստատեաց զեպիսկոպոսարան ի Բջնի քաղաքի զԱռուր Աստուծածածինս՝ հիմնարկեալ կատարեաց Գրիգոր իշխանաց իշխան, որդի Վասակայ. և տուաւ վիճակ ի Սուրբ Աստուծածինս ի Փոշահանից մինչև ի նիգ. և Դիատում... և Աղստե. և տուար զաւազան և Սուրբ Նշան և Աթոռ: Արդ՝ եթէ որ խափանել ջանայ զԱթոռու կամ յայլ տեղիս փոխել, կամ զ՛ողն յափրշտակել, կամ զաւանդ եկեղեցւոյ գողանալ՝ թէ եպիսկոպոսաց կամ յիշխանաց ով որ հակառակի, նզովեսցի յԱստուծոյ և ի մէնչ, և ի թժը. հայրապետաց, և արմատակի ջնշասցի յիշտակ նորա յերկրէ, և անլոյդ կապեսցի: Եւ արդ՝ այս է բնական և առաջին սահմանահատ վիճակ և Աթոռ զոր հաստատեցաք արձանագրով և շրջաբերականաւ զսահմանահատ վիճակի սորա, որ է յարեկելից ի Մարգետոյ մինչև գետն Ախուրեան յԱնոյ, և ի հիւսիսայինս յԱղստե... և որ հատանել ջանայ յայսմանէ ի միջոյ կամ յեղերաց աւելի կամ մասն ինչ, զվերասացեալ զպատիժս կրեսցէ և ի հանդերձելումն. ամէն»:

Ինչպես հետևում է այդ արձանագրությունից, Բջնիի եպիսկոպոսական թեմը ընդգրկում էր ընդարձակ գավառներ, Գեղամածովից մինչև մինչև Ախուրյան գետը, Հյուսիսից մինչև Գուգարք նահանգի Ջորիգոր կամ Կայինո զավառը, Հարավից մինչև Վարաժնունիքի բուն սահմանը, որպիսի հանգամանքը վկայում է Բջնիի եպիսկոպոսական թեմի ուժն ու հեղինակությունը:

Գրիգոր Մագիստրոսի՝ Ասորոց կաթողիկոսի թղթին գրած պատասխանում հիշվում է Բջնիի վանքի առաջին առաջնորդ Եփրեմ արքապիսկոպոսի անունը:

Հստ Վարդան Բարձրերդցի պատմիշի, Պետրոս Գետաղարձ կաթողիկոսը, Սմբատ-Հովհաննես թագավորի հետ ընդհարվելուց հետո, 1029 թվականին, առաջնանում է Բջնիում, Հյուրընկալվելով Գրիգոր Մագիստրոսի կողմից⁴:

Ուշ ժամանակի պատմիշներն ու բանասերները Պետրոսի՝ Բջնիում գտնվելու ժամանակը նշում են 1035 թվականը, ուր նա մնացել է մեկ տարի և հինգ ամիս:

⁴ Մեծին Վարդան Բարձրերդցոյ «Պատմութիւն» լարդապետի, լուսարաննեալ, Վենետիկ, 1861 թ., էջ 132.

Այդ նույն ժամանակներում Բջնիի վանքի առաջնորդ է հիշվում Հովհաննես եպիսկոպոսը, որը շատ հետաքրքիր մի արձանագրություն է փորագրել տալիս Կեշառիսի վանքի զվարավոր եկեղեցու հարավային պատի վրա:

Կեշառիսի վանքը այդ ժամանակ հանդիսանում էր Պահապունիների երկրորդ հոգիում կենտրոնը. Վարաժնունիքիում՝ Բջնիի վանքից հետո:

Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ, Սմբատ-Հովհաննեսի թագավորության ժամանակ (1020—1041), զելումների թագավորը արշավում է Հայաստանի վրա, գրավում նիգ զավառը և հասնում «Մերձ ի յամուրն Բջնի», ուր գտնվում էր Հայոց սպարապետ Վասակը: Նա Բջնիի ամրոցի պաշտպանությունը հանձնարարում է իր որդի Գրիգորին, իսկ ինքը բանակի գլուխ անցած շարժվում է թշնամուն ընդպառաջ: Ճակատամարտը տեղի է ունենում Սերկակի գյուղի մոտ, Քասախի աշճորագին, ուր պատահարաց նետված քարից մահանում է Վասակը, «զոր յանգէտս սպանին ի Սերկակէ»⁵:

Ապա Ուռհայեցին, նկարագրելով Գագիկ թագավորի ժամանակ (1042—1045) պարսիկների հետ տեղի ունեցած կոփիները, տեղեկացնում է, որ Վասակ Պահապունու որդի Գրիգորը, իր զորքերի գյուխ անցած, Հրազդանի ձորում, Բջնի մեծ ամրոցին մոտիկ, հարձակվում է պարսից զորքերի վրա, շարդում նրանց, գերի վերցնում թուրք իշխանին, իսկ կենդանի մնացածները փախչում են գեպի Պարսկաստան⁶:

Արիստակես Լաստիվերտացու վկայությամբ, Գրիգոր Մագիստրոսը Բջնիի ամրոցի բանակները 1045 թվականին հանձնում է Հունաց Կոստանդին Մոնոմախ կայսրին և դրանց փոխարեն ստանում մագիստրոսական աստիճան և մի շարք քաղաքներ ու գյուղեր՝ Միջագետքում և Միջագետքի գրասությունը⁷: Այդ մասին հաղորդում է նաև Վարդան վարդապետի⁸:

Նույն Մատթեոս Ուռհայեցին տեղեկացնում է նաև, որ 1065 թվականին Հայոց կաթողիկոս է օծվում Բջնիցի Վահրամ-Տեր Գրիգորիսը՝ Գրիգոր Մագիստրոսի որդին, Վասակի թոռը¹⁰:

⁵ Մատթեոս Ուռհայեցի, «Ժամանակագրութիւն», Վարդապատ, 1898 թ., էջ 11:

⁶ Միիքար Այրիվանեցի, էջ 59:

⁷ Մատթեոս Ուռհայեցի, էջ 88:

⁸ Արիստակայ Վարդապետի Լաստիվերտացու, «Պատմութիւն», Թիֆլիս, 1919 թ., էջ 61:

⁹ «Հաւաքումն պատմութեան» Վարդանայ Վարդապետի, լուսարաննեալ, Վենետիկ, 1862 թ., էջ 99:

¹⁰ Մատթեոս Ուռհայեցի, էջ 155:



Բջնիի վանքը և Բջնի գյուղի մի

մասի ընդհանուր տեսարանը

Այդ նույնը հաղորդում է նաև Կիրակոս Գանձակեցի պատմիը, ասելով, որ Տեր Խաչիկից հետո, 1065 թվականին, կաթողիկոս է օծվում Տեր Վահրամը, վերանվանվելով Գրիգորիս, որը Գրիգոր Մագիստրոսի որդին էր՝ Բջնի բաղաքից. կոչվում էր Խմաստասեր, հմուտ էր քերականության, կատարել է բազմաթիվ թարգմանություններ՝ հոմարենից և ասորիենից¹¹:

Սեաւ լեռան 1114 թվականի եկեղեցական երկրորդ համաժողովի որոշման համաձայն, ու ոք չէր կարող կաթողիկոս հաստատվել առանց Բջնիի, Հաղբատի, Տաթևի և Արտազի թովմա առաքյալի վանքերի եպիսկոպոսների հավանության ու համաձայնության. Այդ հանգամանքը առավել մեծ շափով բարձրացնում է Բջնիի վանքի դերն ու հեղինակությունը Հայ Եկեղեցու գործերում: Դրան զուգընթաց, ընդարձակվում են նաև թեմի սահմանները դեպի Հարավ, ըստ որի Բջնիի վանքի առաջնորդը միաժամանակ համարվում էր առաջնորդ Դվնա կամ Այրարատա: Խոկ մատենագրական աղբյուրներում, ինչպես կտեսնենք հետո, Բջնին կոչվում էր ամրոց, դղյակ, բաղաք, բերդաբաղաք. «սրբազն և աստուա-

ծապատեալ արհեպիսկոպոսն Տէր Յովհաննէս, որ ունէր զվերատեսութիւն այցելական գիտման քահանայականն դասու կատարողապետութեան Այրարատեան նահանգիս, նիստ կայանի ունելով զամուրն Բջնից¹²: Ապա «Ճտէր Մանուէլ՝ Համբակ վերջին, յաջորդ Բրջնոյ ու Այրարատին»¹³: Մի ուրիշ տեղ՝ «Մանուէլ արքեպիսկոպոս Բրջնոյ և Արարատեան»¹⁴: Այնուհետև, «Ես Մատուր՝ ծառայ ծառայիցն Աստուծոյ, նախարար, վերակացու և առաջնորդ բաղաքիս Բջնույց¹⁵, ևս Տէր Յովհաննէս արքեպիսկոպոս Բջնոյ և Արարատեան»¹⁶, և այլն և այլն:

Սեաւ լեռան երկրորդ ժողովից հետո, ոչ մի տեղեկություն չկա Բջնիի մասին, մինչև 1201 թվականը, երբ Զաքարյաններն այն ազատագրում են սելջուկներից: Այդ մասին հետեւյալ կերպ է պատմում Վարդան վարդապետը. «Յաւուրս ժամանակաց այսոցիկ էին փառաւոր իշխանքն Զաքարէ և իւանէ, որդիք

¹² Լ. Ս. Խաչիկյան, «ԺԴ գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950 թ., էջ 6:

¹³ Լ. Ս. Խաչիկյան, «ԺԵ գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա., Երևան, 1955 թ., էջ 51:

¹⁴ Նույն տեղում, էջ 162:

¹⁵ Նույն տեղում, էջ 421:

¹⁶ Նույն տեղում, էջ 422:

¹¹ «Թատմութիւն հայոց», արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ, Թիֆլիս, 1909 թ., էջ 89:

Սարգսի... և զի արհագունք էին, յառաջեցին որ ըստ օրէ ի բարձ և ի պատիւ եւ յաւուրս թամարին առաւել փառաւորեցան, և ետ նոցա զկուէ, և ինքեանք քաշութեամբ իւրեանց թափեցին ի թուրքաց յուղվ բերդս և գաւառս ի սուղ ժամանակի... և ի վեց հարիւր լիսուն թուին (1201) առին գիշնի... բերդաքաղաքն»¹⁷:

Վարդան Բարձրբերդցին¹⁸՝ և Ստեփանոս Օրբելյանը¹⁹ նույնպես տեղեկացնում են, որ Զաքարյանները սելչուկներից գրավեցին Թջնի բերդաքաղաքը, 1201 թվականին:

Այդ մասին հանգամանորեն խոսվում է նաև Հաղպարծինի վանքի Ս. Գրիգոր եկեղեցու գավթի արևմտյան մուտքի շրջանակի վրա փորագրված հետևյալ արձանագրության մեջ. «Կամաւ ամենակալին Աստուծոյ այս մեր գիր յիշատակի է և արձան մշտնչենաւոր որդեաց մեծին Սարգսի, յազգէ Բագրատունեան՝ հւանէի և Զաքարէի, յորժամ նախախնամութիւն Աստուծոյ էհաս յարարածս և ետ նաւարառին տիրել սեփական ժառանգութեան նախնեաց մերոց՝ ետ ի ձեռս մեր յառաջ անառիկ դղեակն Անբերդ և զիթագաւորանիստ քաղաքն Անի և անդա զամուրն Թջնի, զՄարանդ, [0]Ձթ] և Գաւազանք ի Թաւրէժ, զԿարնոյ քաղաք մինչև Խլաթ....[և զԵ]-րուան, զՊարտավ մինչև ի Բեյուկան և զայլ բազումս իւրեանց սահմանաւն զոր աւելորդ համարեցաք յիշատակել...»²⁰:

Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, Զաքարի սպասալարի կողմից 1205 թվականին լոռի քաղաքում հրավիրված ժողովին մասնակցում էր նաև Թջնիի առաջնորդ Վրթանես եպիսկոպոսը:

Թջնիի վանքի Ս. Աստվածածին եկեղեցու հարավային մուտքի ճակատակալ քարի վրա փորագրված արձանագրությունից իմացվում է, որ եկեղեցին վերանորոգվել է 1209 թվականին. «Թվ. ՈԾԸ. Յաշխարհակալալութեան քաջաց և յաղթողաց՝ մեծ շահնշահաց Զաքարէի և հւանէի, որդուց Սարգսի, յեպիսկոպոսութեան Վրթանէսի, ևս՝ մեղուցեալ ծառայ Աստուծոյ Վահանս...շինեցի զիշխանավանից մեծ եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնին. և զայս Աստուածածինս նորոգեցի սալով, որ ի բնէ չէր սալած, և Հաստատեցին ի տարին Ե. աւը ժամ ի տաւնի Սուրբ Սննդեանն վասն փրկութեան հոգույ իմոյ. ով խափանէ զպատարագն՝ իմ մեղացն պարտական է առաջի Քրիստոսիւս:

¹⁷ Լ. Ս. Խաչիկյան, «Ժե զարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 138;

¹⁸ Նույն տեղում, էջ 181:

¹⁹ «Պատութիւն նահանդին Սիսական», արարեալ Ստեփանոս Օրբելյան արևապիկոպոսի Սիմեաց, թիֆլիս, 1910 թ., էջ 391.

Վարդան Բարձրբերդցի պատմիւը, նկարագրելով Խորեզմի շահ Զալալեղպիդինի՝ Պարսկաստանից Հայաստանի վրայով դեպի Վրաստան կատարած արշավանքները, նախ տեղեկացնում է նրա զորքերի և Զաքարյան իվանեի գլխավորությամբ Հայ-վրացական միացյալ բանակի միջև 1225 թվականի աշնան սկզբներին Գառնի ավանի մոտ տեղի ունեցած ճակատամարտի և իվանեի պարտության մասին, ապա թշնամու առաջիւաղացումը Հրազդան գետի հովտով դեպի Հյուսիսի թջնիի գրավումը նույն տարվա աշնան կեսերին:

ԺԳ գարի կեսերին, Հայոց Կոստանդին կաթողիկոսին գրած թղթին հեղինակակից էին Թջնիի եպիսկոպոսներ Վանականը և Գրիգորը²¹: Այդ նույն Վանական և Գրիգոր եպիսկոպոսները, Զաքարյան Շահնշահի իշխանության ժամանակ, Կոստանդին կաթողիկոսի հրամանը՝ Հոգևորական ձեռնադրելու կարգի մասին, փորագրել են տալիս Թջնիի վանքի հարավային պատի վրա, որը հետեւյան է. «Թվիս Հայոց Զ. (1251). Ազգմամբ և հրամանաւ Հոգույն Սրբոյ և կամաւ Կոստանդիայ կաթողիկոսի հաստատեցաք զիախստեալ կանոնքս և եղաք աստ ծառայքս Քրիստոսի՝ Տէր Վանական և Տէր Գրիգոր, ողորմութեամբ նորա եպիսկոպոսը Թջնոց... յիշխանութեան Մեծին Շահնշահի. զի յայսմհետէ մինչև ի կատարած չոնի ոք առնել կաշառաւք ձեռնադրութիւն վարդապետու և երէց: Կատարիւք հրամանացս աւրհնին յԱստուծոյ»:

Այդ նույն ԺԳ գարի երրորդ քառորդի վերջերին, Սյունյաց միտրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի կողմից Հայոց կաթողիկոս Գրիգոր Անավարդցուն գրված դաշնաբանական և կանոնական թուղթն ստորագրում է նաև Թջնիի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը²²:

Վանքի հարավային պատի երեսի վրա փորագրված՝ 1303 և 1306 թվականները կրող արձանագրությունները ինքնին ապացուց են այն բանի, որ ԺԴ դարի սկզբներին շեն էր վանքը. «ՉԾՆ (1302). Կամաւ ամենակալին Աստուծոյ ևս Գրիգոր իշխան, որդի...թոռն Գուփին...»: ՉԾՆորհաւը նախախնամող Սուրբ Հոգույն ևս Քոշաքեր և ամբուն իմ Խորիշահ միաբանեցաք Սուրբ Աստուածածնիս և տուաք արդիւնք հալալ լընջից մերոց. եւ սպասաւորք սորա՝ Տէր Ցովհաննէս և Տէր Սարդիս կարգեցին ի տարին Դ. աւը պատարագել զՔրիստոսի ի տաւնի Սննդեան՝ Բ. Քոշաքերիս առնեն և Բ. Խորիշահին. ամէն. ՉԾՆ (1306)»:

¹⁷ Ա. Խաչիկյան, «Ժե զարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 295.

¹⁸ Ստեփանոս Օրբելյան, էջ 487.

Դրանից որոշ ժամանակ անց, 1318 թվականին եղվարդում գրված մի Ավետարանի հիշատակարանում թջնին անվանվում է քաղաք²²: Այդ հանգամանքը նույնպես մի կարեվոր ապացուց է այն բանի, որ այդ շրջանում թջնին գտնվում էր շեն և բարգավաճ վիճակում:

Զաքարյանների տիրապետության շրջանում թջնին ընդհանրապես, թե՛ ավանը և թե՛ վանքը, գտնվելիս են եղել շեն, զարգացած ու բարգավաճ վիճակում: Այդ բանին որպես ապացուց կարող է ծառայել վանքի վրա փորագրված հետևյալ արձանագրությունը. «Յուսովն անմահին Աստուծոյ, ես՝ Զաքարէ, որդի Սահմապ-դիվանին և պարոն Խոշաբին, թռոն Արարակ Աւագին՝ որդոյ Աթարակ Խանէի, վասն մեր երկար կենդանության և փրկութիւն Հոգոյ իմոյ՝ ի վեր կալայ որ ի թջնի պյլ մարդոյ տէրութիւն չելնի. և թողի զամէն հարկ՝ զամիրահարկն, զհարսանեհարկն, զկովայ համարն, զկալաթաղարն, զսալլահարկն, զմահկանէն, աւտարականն բան զդաղմէն այլ իր շտա, յաղման շառնեն, որ յայսմհետէ մինչև յափտեան զաստատուն կայցէ արձանս իմ. եթէ որ խափանել շանայ՝ յիմոց կամ յիմ զաւակաց կամ յաւտարաց, իմ մեղացն պարտական է առաջի Աստուծոյ»:

Սակայն թջնին միշտ չի մնացել շեն ու բարգավաճ վիճակում, այլ, ինչպիս Հայաստանի բազմաթիվ բնակավայրերը, ենթարկվել է մոնղոլների դաժան ասպատակություններին՝ ավերվել, կոտորվել և նորից վերաշինվել ու վերահաստատվել է: Այդ մասին որոշակի հասկացողություն է տալիս վանքի վրա փորագրված մի արձանագրություն. «Թվ. Պէ (1358). ի զարմէ երկուց հարազատաց՝ քաջաց և յաղթողաց Ամիրսպասալար Զաքարէի և Աթարակ Խանէի, ես, Աթարակ Շահնշահ, որդի Աթարակ Զազայի... Աստուծած խոճաց մեզ ու մեր հայրենիքս՝ Քիջու բերդս ի մեր ձեռս բերեաց. վասն փրկութեան հոգուց և երկար կենդանութեան մերոյ կրկին նորոգեցար զեկեղեցիս և զբոնիաթ արձանս վերստին հաստատեցար զվիճակ, զվանը, զգեօղ, զսարի, զգաշտի հայրենիք... ու շինական, գործատոր զինջ են... զԱստուծածածնա ծառայութեան ազատ և թարիսան արարին ի հարկէ և ի ծառայութենէ: Տէր Վանական և սպասաւորս խոստացան մեզ Յակոբայ տանին գիշերապաշտամ առնեն: Ով ոք զմեր հաստատած արձանս խափանել շանայ, դատի Աստուծոյ և մեր մեղացն պարտական եղիցի»:

²² Լ. Ս. Խաչիկյան, «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 275: (Բոլոր պատմական ու հիշատակագրական աղբյուրներում լանկ-թամուրի՝ թջնին վրա կատարած արշավանքը ցուց է տրվում 1386 թվականին, մինչդեռ այդ հիշատակարանում նշվում է 1387 թվականը):

Սրանից շուրջ 28 տարի հետո, 1386 թվականին, թջնին վրա է հարձակվում լանկ-թամուրը, ավերում ու հրդեհում է այն, բնակիշների մեծ մասին կոտորում, մի մասին էլ զերի տանում, այդ ժամանակ սպանվում է նաև վանքի առաջնորդ Վանական վարդպետը:

Այդ մասին Գրիգոր վարդապետ Խլաթեցու (Սերենց) ձեռագիր՝ «Գանձարան»-ի 1387 թվականին գրված շափածո հիշատակարանում կարդում ենք.

«... Մինչև ի Կարս արշակեցին,
Զերկիրս ամէն շալ արարին....
... Զամուր տեղիսն յաւար առին
Եւ շաս ննիրս գրծեցին,
Ցորոց և մի էր և թըշնին,
Որ էր Արոռ երկուց պետին,
Զոր առին և բանդեցին,
Զեպիսկոպսն սպանեցին»²³:

Լանկ-թամուրի կողմից թջնին գրավելու և վանականին սպանելու մասին պատմում է Սամվել Անեցին. «Ի սոյն ամի Պէ. (1386) թվին լանկթամուրն եկն ի թագրիզ և ի նախշուան՝ և անտի ի միում աւուր կալաւ մինչև ի Կարրի և թջնի, ի Գառնի՝ Սուրմարի, ի Կողբ. և անտի զնաց ի Վրացտուն՝ և արար զազայ զՏփիսի քաղաքը»²⁴:

Իսկ թովմա Մեծոփեցին ասում է, որ Վանականը սպանվեց «յառնով թըշնոյ ի թագաւորէն Ազամիու թաթարաց»²⁵:

ԺԵ գարի սկզբներին, թջնին առաջնորդ է հիշվում Մանվել արքեպիսկոպոսը, որի գրած Ավետարանը ստանում է երկանցի Հակոբ անոնով մեկը և նվիրում երկանի «Երկուերեսնի» եկեղեցուն: Այդ ձեռագրի հիշատակարանում Մանվելը միաժամանակ հիշվում է որպես առաջնորդ Այրարատա: Մեզ ենք բերում այդ հիշատակարանի վերջին՝ համապատասխան մասը:

«... Զտէր Մանուէլ՝ համբակ վերշին,
Յաջորդ թըշնոյ ու Այրարատին,

²³ Լ. Ս. Խաչիկյան, «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 275: (Բոլոր պատմական ու հիշատակագրական աղբյուրներում լանկ-թամուրի՝ թջնին վրա կատարած արշավանքը ցուց է տրվում 1386 թվականին, մինչդեռ այդ հիշատակարանում նշվում է 1387 թվականը):

²⁴ Սամուէլի բահանայի Անեցոյ «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893 թ., էջ 171:

²⁵ Թովմա վարդապետի Մեծոփեցոյ «Պատմութիւն լանկ-թամուրաց և յաշորդաց իւրոց», Փարիզ, 1860 թ., էջ 181:

Որ ծըրեցի ծայրօք մատին
Զիշատակաց զիս վերշին...»²⁶:

Վերոհիշյալ Մանվել արքեպիսկոպոսի մասին, որպես Բջնիի և Ալբարատի առաջնորդի, Հիշվում է նաև 1414 թվականին Օշականում գրված մի ճաշոցի հիշատակարանում²⁷:

Նշված հիշատակարաններից պաղող երեսում է, որ Բջնին, որն այնքան տուժել էր Լանկթամուրի արշավանքների հետևանքով, ավերվել, բայբայվել էր ԺԵ գարի սկզբներին, նորից վերականգնվել ու շնչացել էր և ձեռք բերել իր հզորություն ու հոշակը՝ պահպանելով «առաջնորդ Բջնոյ և Ալբարատայ» իր նախկին տախողոսը: Այդ առումով առանձնապես ուշագրավ ու հետաքրքիր է 1432 թվականին Բջնում գրված մի ձեռագիր Ավետարանի հիշատակարանը: «... Ի սոյն ժամանակի, յեպիսկոպոսիթեան արհական Աթոռույս Բջնոյց Տէր Ցովհանէսի, ևս Սատուր՝ Ժառայ Ժառայիցն Աստուծոյ, նախարար, վերակացու և առաջնորդ քաղաքիս Բջնոյ, և ամուսին իմ Սարիբէկ՝ հասեալ ի ժամ ծերութեան, ակն ունելով ելից ի կենցաղոյս՝ չերմեռանդ սիրով ստացաք զՍուրբ Աւետարանս՝ մեղ և նախնեաց մերոց լիշատակ յափառեական: Եւ ընծալերաք զսա մեծ սիրով արհական աթոռոյս Բջնոյ և երկնահանգէտ մաւրս լրաց Սուրբ Աստուծածնիս, յիշատակ հոգոց մերոց»²⁸:

Մեջ բերված հիշատակարանում բնորոշ է այն, որ այդ ժամանակ Բջնին շարունակում է կոչվել քաղաք: Խսկ առավել ուշագրավն այն է, որ այդ քաղաքի կառավարիչը կոչվում է նախարար, վերակացու և առաջնորդ քաղաքի: Բացի այդ, հիշատակարանում հիշված Տէր Ցովհաննեսոյ մի ուրիշ ձեռագիր Ավետարանի հիշատակարանում նշվում է որպես «արքեպիսկոպոս Բջնոյ և Ալբարատայ». «Ես Տէր Ցովհանէս արքեպիսկոպոս Բջնոյ և Ալբարատեան, որ զգիրս գրեցի վկայ եմ, Աստուծածնորհաւաք անէ»²⁹:

Հովհաննես արքեպիսկոպոսը 1441 թվականին մասնակցում էր նաև Կիրակոս կաթողիկոս Վիրապեցու ընտրությանը, ինչպես այդ մասին տեղեկացնում է Թովմա Մեծոփեցի պատմիքը³⁰:

Բջնիի մասին հաջորդ տեղեկությունը վերաբերում է 1478 թվականին, ըստ որի Բջնիի

²⁶ Լ. Ս. Խաչիկյան, «ՃԵ գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասին Ա., էջ 51:

²⁷ Նույն տեղում, էջ 162:

²⁸ Լ. Ս. Խաչիկյան, «ՃԵ գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 421:

²⁹ Նույն տեղում, էջ 422:

³⁰ «Թովմա Մեծոփեցու հիշատակ արանը», Թիֆլիս, 1892 թ., էջ 52:

վանքի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսը գրում է մի Ավետարան և նվիրում պատրոն վարդապետին (Հավանական է, որ վերջինս Բջնիի կառավարիչը եղած լինի) և նրա ամուսին Մելիք-Խաթունին:

Այդ հիշատակարանի մեջ Բջնիի եպիսկոպոսն այլևս չի հիշատակվում որպես առաջնորդ նաև Ալբարատա: Հավանական է, որ ժեղարի երկրորդ կիսում Բջնին, որպես կրոնական նշանավոր կենտրոն, զգալի շափով թուլացել էր:

Դրանից հետո, մինչև ԺԵ գարի սկիզբները, ոչ մի տեղեկություն չկա Բջնիի մասին: Առաջեկել Դավրիթեցին պարսից Շահարաս թագավորի արշավանքների մասին խոսելիս հիշատակում է նաև նիդ գավառը, որի կազմի մեջ էր գտնվում այդ ժամանակ Բջնին: Ապա սրտի խոր կոկիծով ու դառնությամբ պատմելով տեղում մնացածների աղքատ, տառապյալ, սովալուկ վիճակը, Բջնիի մասին հետևյալ սրտաճմլիկ դեպքն է պատմում: «Եւ ի գիտն զոր Բջնի ասեն, ճանապարհորդ ու մանք ուրբ ընդ այն անցանէին, տեսանէին զի ծովս ելանէր ի տանէ միոյց»³¹:

Թի ի՞նչ վիճակի մեջ է եղել Բջնիի վանքը այդ ժամանակաշրջանում, ստույգ հայտնի չէ. սակայն վերը մեջ բերված տեղեկություններից հասկանալի է դառնում, որ վանքը նույն պես պետք է գտնվելիս լիներ քայլացված ու լրված վիճակում:

1610—1624 թվականների ժամանակարն թացքում, Բջնիի վանքի առաջնորդ է հիշվում Մանվել արքեպիսկոպոսը, որը հայտնի է որպես երաժիշտ: Հավանական է, որ հենց այդ Մանվելի առաջնորդության ժամանակ, կրկին վերահստատված լինի վանքը:

Բջնիի վանքը ավելի զարգանում ու ընդարձակվում է Փիլիպոս հափսկոպոսի առաջնորդության ժամանակ՝ 1631 թվականից, ըստ որի վանքի միաբանության անդամների թիվը նա հասցնում է մինչև 30-ի: Խսկ 1643 թվականին, Փիլիպոս կաթողիկոսի հրամանով, նա վերանորոգել է տալիս վանքի տանիքը, որի մասին հանգամանորն պատմում է մի ձեռագրի հետևյալ հիշատակարանը: «Ե հոշակաւոր Սուրբ Աթոռոյս Տիրամօր Աստուծածնիս սպասաւոր, և տեսուշ ժողովրդեան վիճակի սորին, և իմ եկեալ աստ տեսի զանցինութիւն և զանցնակութիւն Սուրբ Աթոռույս: Միշտ այլըցեալ և խորովէր լեարդ և սիրտ իմ: ապա մեծաւ յուսով ապակինելով յողորմութիւն ամենակալին... սկսեցաք միաբանս ժողովել ըստ չափու և ըստ արժանաւորութեան տեղույս մեծի, թուով իրեւ երեսուն, աւելի և ոչ պակաս: Յետ որոյ կարողու-

³¹ «Պատմութիւն» Առամել վարդապետի Դավրիթեցոյ, Վաղարշապատ, 1884 թ., էջ 66.

թեամբ և կամակցութեամբ Տեառն արարաք օր ատուր շինութիւն՝ ըստ մերում ուժոյ ի փառ Ս. Աստուածածնին: Նախ և առաջ դատանիս եկեղեցւոյն, որ յոյժ քակեալ քանդեալ ապականեալ և աւերեալ էր ի բազում ժամանակաց, մինչ զի սակաւ ինչ անձրեւլով՝ զամենայն ի ներքս դառնայր հաւասար, և կաթիլ մի ոչ մնայր արտաքս. և մեք բազում աշխատութեամբ շինեցաք զգլուի տաճարին. նաև ժամատունն ևս աւերակ և փակ եղեալ, զորմուն և զգուին փայտաշէն արարեալ հաստատեցաք: Ապա յետ այսորիկ սկսեալ շինեցաք զջիթհանքն և զջրաղացն, և այլ ամենայն հոգեսոր և մարմնաւոր պակասոթին՝ լցաք ըստ մերում շափի»³²:

Առաքել Դավորիթեցին նույնականում է թշնիի վանքի առաջնորդ Փիլիպոս եպիսկոպոսի կողմից վանքի Ս. Աստվածածին եկեղեցու տանիքի վերանորոգման մասին, ավելացնելով, որ Փիլիպոս եպիսկոպոսին հաջորդող Մովսես վարդապետը կառուցում է վանքի պարիսպը³³:

1673 թվականի մարտի 6-ին թշնի է այցելում ֆրանսիացի ճանապարհորդ Շարդեն և օթևանում է վանքում: Խոկ 1700 թվականի հունիսի 31-ին՝ բուսաբան Տուոնքորտը, որը վանքը տեսնում է շեն վիճակում. նա այսուել նկատում է ընդարձակ տարածության վրա ավերակներ, որից այն ենթադրությունն է անում, թե այդտեղ գոյություն է ունեցել քաղաք:

Թե ե՛րբ է դադարել թշնին եպիսկոպոսանիստ վայր լինելուց, ստուգ հայտնի չէ. Սիմեոն կաթողիկոս Երեանեցու վկայությամբ, թշնիի թեմը ԺՈ դարի սկզբներին կազմված էր հիսունի շափ վուղերից՝ կոտայքի ու Վարաժնոնիքի կամ Մաղկունյաց գավառներից: Նույն Սիմեոն կաթողիկոսի վկայությամբ, թշնիի վանքը 1656—1744 թվականների ժամանակամիջոցում, զանազան վայրերում ձեռք է բերում՝ նվիրաբերությամբ կամ փողով գնելով, բազմաթիվ կալվածներ՝ այգիներ, պարտեզներ, վարելահողեր, խոտհարքեր, տներ, ջրաղացներ, ծիթհաններ և այլն³⁴:

Թշնիի վանքը ԺՈ դարի կեսերից աստիճանաբար թուզանում է և, հավանաբար, նույն դարի երրորդ քառորդից դադարում է որպես մենաստան գոյություն ունենալուց և մնում է լրված ու ամայի վիճակում: Այդ առթիվ ժամանակակիցները գրում են.

«Մագիստրոսի վանք՝ որ թշնի անուանի, Երեանայ սա ևս հիւսիսն անկանի.

³² Հ. Պ. Ալիշան, «Այրարատ», էջ 275:

³³ Առաքել Դավորիթեցի, էջ 271:

³⁴ Սիմեոն կարդիկոս Եւլանեցի, «Ճամբառ, Վաղարշապատ», 1873 թ., էջ 284—286:

Եր սա երբեմն պայծառ Աքոռ նազելի, Աւան՝, ներկայս բութ բնակին ի միջի...»³⁵:

Բշնիի վանքը որչափով հոչակված է եղել որպես կրոնական խոշոր կենտրոն, նույնքան էլ նշանավոր է եղել իր բարձրագույն հոգեկոր դպրոցով: Այնուղեք ուսուցել են ժամանակի այնպիսի զիսական կարկառում զեմքեր, ինչպիսին Գրիգոր Մագիստրոսը, որի անունով շատերը այդ դպրոցը կոչել են «Մագիստրոսի ձեմարան»: Ինչպես և Մագիստրոսի որդի Վահրամը, որը 1065 թվականին կաթողիկոս ձեռնադրից Գրիգորիս անունով: Հայտնի է եղել որպես իմաստասեր, հմուտ քերականական արվեստին, կատարել է բազում թագում մանություններ՝ հունարենից ու ասորերենից, ինչպես այդ մասին տեղեկացնում է Կիրակոս Գնաձակեցի պատմիչը³⁶:

Դպրոցի ուսուցիչներից նշանավոր է եղել նաև Հովհաննես արքեպիսկոպոսը, որին Մկրտիչ գրիշը համադրում է ժամանակի հայտնի գիտնական, փիլիսոփա և ուսուցապետ հսայիի հետ. այդ առթիվ ահա թե նա ինչ է գրում «Մեկնութիւն Սաղմոսաց ներսիսի Լամբրոնացւոյ» իր ձեռագիր աշխատության հիշատակարանում, գրված 1302 թվականին. «...Քաջահանճար փիլիսոփայն և բանիքուն ճարտարն ... աստուածիմաստ և տիեզերալոյս բարոնացւոտն ծասայի, որ ի նուազեալ ժամանակիս առաքինասէր վարուք պայծառացեալ և աստուածաշղուն կակարանցն իմաստիք գերալրացեալ իբրև գարեգին փայլէր յաշխարհի, որ ի վերայ ամենայն մասանցն բարեհաց, որով բոլորն կատարի առաքինութիւն, և զուսուցչապետութեանն ևս զգործ ի կիր արկեալ ընդ առնելն լծակցելով և զամենայն եկեալսն առ ինքն յաւժարութեամբ և ձեռնուու աւժանդակութեամբ Հոգւոյ շնորհաւ ծաղկեալ, սրբազն և աստուածապատեալ արհեափիսկոպոսն Տէր Յովկաննէս, որ ունէր զվերատեսութիւն այցելականն դիտման քահայանայականն զասու կատարղապետութեան Այրարատեան նահանգիս, նիստ կայանի ունելով զամուրն թշնի, որ է ամենայն առաքինութեամբ զարդարեալը³⁷:

Արքանահիշատակ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը տեղեկացնում է, որ ինքը 1861 թվականին Ալեքսանդրոպոլիի (այժմ Լենինական) Ս. Աստվածածին եկեղեցում տեսել է մի ձեռագիր Ակենտարան, որը գրել

³⁵ Ղ. Փիրդալամյան, «Ճանապարհ որդութիւն ի Մայր Աթոռն Արարատեան», Կոստանդնուպոլիս, 1871 թ., էջ 89:

³⁶ Կիրակոս Գանձակեցի, էջ 89:

³⁷ Ղ. Ս. Խաչիկյան, «ԺԴԴ գարի հայերեն ձեռագրերի հիշատականացներություն», էջ 5—8:

են Հովսեփ և Հովհաննես քահանաները նէլ (988) թվականին Բշնիի վանքում, իսկ հետագայում՝ 1646 թվականին այս կազմել է տվել վանքի առաջնորդ Փիլիպոս արքապիսկոպոսը³⁸: (Նէլ թվականը հավանաբար գրչի վրիպում լինի, որովհետև Բշնիի վանքը հիմնադրվել է 1031 թվականին):

Այնուհետև հայտնի է եղել Դավիթ Բշնեցին, որը ճանապարհորդություն կատարելով դեպի Երուսաղեմ և Հոռոմ, ճանապարհին կանգ է առնում Ակների վանքում, ուր արտագրում է Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» աշխատությունը³⁹:

Բշնիի վանքի հոգևոր դպրոցի գրիշներից և ուսուցիչներից հիշատակելի են նաև Մանվել արքապիսկոպոս՝ ժծ զարի սկիզբներին, որի գրած Ավետարաններից մեկի հիշատակարանը մեջ բերինք վերևում: Այդ Մանվել արքապիսկոպոսի և մյուս Հովհաննես գրչի մասին հիշատակում է նաև Օշականում գրված մի ձաշոցի հիշատակարանում: «Յիշեսչիք ի Քրիստոս զՏէր Մանուէլն արհեպիսկոպոս Բշնոյ և Արարատեան, և զՏէր Յովհաննէս, որք բազում աշխատութեամբ աւգտակարք եղեն աստուածաշունչ տառիս...: Աւարտեցաւ գիրքս աստուածաշունչ ի թուաբերութեանս

³⁸ Մերովի արմեակապոս Սմբատյանց, «Տեղագիր Գեղարքունիք ծովագարդ զավահի, որ այժմ նոր-Բայակետ զավառ», Վաղարշապատ, 1896 թ., էջ 321:

³⁹ Լ. Ս. Խաչիկյան, «ԺԴ զարի հայերն ձեռագրերի հիշատակարւ ններ», էջ 187:

Հայոց ՊԿ (1414), ի գեղաւանս յԱւշական...»⁴⁰:

Ապա Գրիգոր եպիսկոպոսը, ինչպես և Տեր Սարգիսը, Տեր Հորդանան, Ստեփանոս քահանան, Մովսես վարդապետը և ուրիշ շատ գրիշներ և ուսուցիչներ:

Բշնիի վանքի հոգևոր դպրոցի ուսուցիչներից հատկապես հիշատակության արժանի է Ժէ դարի երրորդ քառորդում վանքի առաջնորդ Մովսես վարդապետը, որը հետո դարձավ եպիսկոպոս և որի ջանքերի շնորհիվ այնքան աճեց, զարգացավ ու բարգավաճեց Բշնիի վանքը, ինչպես այդ պարզ երկում է վերը մեջ բերված հիշատակարանից:

Այդ Մովսեսի մասին նրա աշակերտ Ստեփանոս քահանան նույն ձեռագրի հիշատակարանում հետևյալն է գրում. «... Մեծ, քաջ հոնտոր և անյաղթ փիլիսոփիայ, հոգիացեալ րաբունապետ և արքապիսկոպոս Բշնոյ մեծ նահանգի Արարատեանս երկրի»⁴¹:

Ապա հիշատակելի է Սիմեոն րաբունին, որը թաղված է վանքին կից գերեզմանատանը և որի տապանաքարի վրա կարդացվում է. «Այս զամբարան սրբոյ մարմնոյ Սիմեոնի քաջ րաբունոյ... Հազար հինգուն եօթնեակ (1648) թուոյս»:

(Շարունակելի)

⁴⁰ Լ. Ս. Խաչիկյան, «Ժծ զարի հայերն ձեռագրերի հիշատակարւներ», էջ 162:

⁴¹ Հ. Պ. Ալիշան, «Այրարատ», էջ 275: